

ՎԵՆՍ. «Ո՛Ր ՌՈՒՄԻԱՆ, Ո՛Ր ԱԼ ՈՒԲՐԱՆԻԱՆ ՏԱԿԱԽՆ
ՊԱՏՐԱՍԵ ԵՆ ԽԱՂԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒՐ»

Ո՛Ր Ռուսիան, ո՛չ ալ Ուքրանիան տակաւին պատրաստ են խաղաղութեան համաձայնագիր կնքելու: Այս մասին «Նիուզմաքս»-ի հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճէյ. Տի. Վենս: «Հակառակ անոր որ Միացեալ Նահանգներու նախագահի եռանդուն դիւանագիտութիւնը կրնայ մարդոց փոխզիջման մղել, վերջին հաշուով պետք է ըլլան երկու կողմեր, որոնք պատրաստ են գործարք կնքելու, եւ ո՛չ Ռուսիան, ո՛չ ալ Ուքրանիան տակաւին պատրաստ են ատոր», ըսած է փոխնախագահը: Նշենք, որ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւն տեղի ունեցաւ: Թրամփի համաձայն, հաղորդակցութեան ընթացքին «մեծ յառաջընթաց» արձանագրուած է:

ՍԱԼԱՍ ԱՌԻՒ
ԵՒ ՊԸՐՐԻԻ ԱՅՅԵԼԵՑ



Վարչապետ Նաուաֆ Սալամ երեկ առաւօտեան այցելեց Պաապտայի պալատ, ուր հանդիպում ունեցաւ հանրապետութեան նախագահ Ժոզէֆ Աուկի հետ:

Նախագահ Աուս վարչապետին հետ քննարկեց երկրին մէջ ընդհանուր կացութիւնը, մասնաւորաբար խորայնեան յարձակումներու շարունակման լոյսին տակ հարաւային Լիբանանի կացութիւնը:

Շար.ը՝ էջ 2

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ԶԱՂԱԶԱԿԱՆ
ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏ ԵՆ,
ԻՍԿ ԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԽՆՔՆԵՐԸ
ՓՈՓՈԽԱԿԱՆ ՇԱՅԵՐ ԵՆ»



ՀՀԴ Բիւրոյի անդամ, Միջին Արեւելքի պատասխանատու, Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի «Աքս Սէյ» պարբերաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց. «Քաղաքականութիւնը բան մըն է, ընտրութիւնները՝ այլ բան: Քաղաքական ընտրանքները հաստատ սկզբունքներ են, իսկ ընտրական դաշինքները՝ փոփոխական շահեր»:

«Փոխան սկզբունքներու շուրջ համաձայնութեան «մեր Լիբանանը, ձեր Լիբանանը» արտայայտութիւնները եւ Լիբանանի նկատմամբ տարբեր խումբերու հակասական պատկերացումները լսելը ցաւալի է: Մենք կը նախընտրենք ամբողջ հայրենիքի համար բնական սկզբունքներու

Շար.ը՝ էջ 2

ՈՒԽԹԵՈՒՑ. «ՀԱՄԱՍ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ
ԱՊԱԳԱՅ ՉՈՒՆԻ ԵՒ ՊԵՏԸ Է ԿՏՐՈՒԿ
ԿԵՐՊՈՎ ԶԻՆԱԹԱՓՈԽԻ»



Միացեալ Նահանգներու «Միջին Արեւելքի հարցով պատուիրակ Սթիւ Ուիթթօք յայտնեց. «Պետք է Համաս կտրուկ կերպով զինաթափուի, ան Կազայի մէջ ապագայ չունի»: Այս մասին հաղորդեց «Նիւ Եորք Փոսթ» օրաթերթը:

«Փոխանցման փուլը պետք է ներառէ Կազայի բնակչութեան պաշտօններն ու կրթութիւնը եւ ոչ թէ միայն զենքը եւ բռնութիւնը», նշեց Ուիթթօք:

«Միացեալ Նահանգներ կ'աշխատին երաշխաւորելու Կազայէն մահացած գերիներու բոլոր դիակներու տունդարձի երաշխաւորման համար», ըսաւ ան:

Շար.ը՝ էջ 2

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՅԸ ԱՅՅԵԼԵՑ
«ՇԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵՐՈՆ

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեան ուրբաթ, 17 հոկտեմբեր 2025-ին, «Շաղգոյեան» կեդրոնին մէջ ընդունեց խորհրդարանի փոխնախագահ Էլիաս Պու Սաապը: Հանդիպումին ներկայ էր Կեդրոնական կոմիտէի անդամ՝ Նախկին նախարար Աւետիս Կիտանեան:

Այցելութիւնը առիթ հանդիսացաւ շնորհաւորելու Նորընտիր Կեդրոնական կոմիտէն եւ անոր ներկայացուցիչը:

Հանդիպումին քննարկուեցան ներքին եւ շրջանային զարգացումները՝ անվտանգութեան, քաղաքական, տնտեսական, ընտրական եւ ընկերային հարցերու գծով, որոնք ուղղակիօրէն ազդեցութիւն կ'ունենան լիբանանցիներու կենսամակարդակին վրայ:



ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ
«ՄԵԾ ՅԱՌԱՋԸՆԹԱՅ»

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարեց, որ Հուլիսի 1-ի մայրաքաղաք Պուրտլանտի մէջ հանդիպում պիտի ունենայ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

Ան նշեց, որ հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին «մեծ յառաջընթաց» արձանագրուած է:

Ռուսիոյ նախագահի օգնական Եուրի Ուշաքով հեռաձայնային հաղորդակցութեան անդրադառնալով



լրագրողներուն յայտնեց. «Համաձայնութիւն գոյացաւ, որ երկու երկիրներու ներկայացուցիչները

Շար.ը՝ էջ 2

ՀՀԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԻ ՆԱՄԱԿԸ
ՅԱՆՁՆՈՒԵՑԱԼ ԴՈՐՎԵԿԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄ ԵՌՆԱՄ ՍԱՅԵՏԻՆ

Օգտուելով ՀՀԴ «Չաւարեան» ուսանողական միութեան ատենապետ Սամ Կարապետեանի Նորվեկիոյ արտաքին գործոց նախարարութեան՝ Նորվեկիոյ մէջ կազմակերպած ծրագիրին մասնակցութեան առիթէն, ՀՀԴ Լիբանանի Հայ դատի մարմինը Նամակ մը յղեց Նորվեկիոյ խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի եւ Նորվեկիական Զրիստոնեական-ժողովրդավարական կուսակցութեան անդամ Եռնաս Սայետին:

Հայ դատի մարմինը Նորվեկիացի երեսփոխանին ուշադրութեան յանձնեց, որ 8 օգոստոսին Ուաշինկթընի մէջ նախաստորագրուած Հայաստան-Ազրայիճեան համաձայնագիրին



իրէն նպատակ կը նշուի «արդար, համապարփակ եւ տեսական

Շար.ը՝ էջ 8

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ԶԱՂԱԶԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ԵՒ ՍԻՆ ԷԼ ՖԻԼԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ
ԵՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ



Պուրճ Համուտի քաղաքապետութեան նախաձեռնութեամբ եւ Պուրճ Համուտի ու Սին Էլ Ֆիլի հաստատութիւններու աշխատանքի համակարգ-

ման յանձնախումբին եւ Սին Էլ Ֆիլի քաղաքապետութեան համագործակցութեամբ, Լեռնալիբանանի նահանգապետ

Շար.ը՝ էջ 8



ՀՀԴ ԲԻՒՐՈՅԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ դէմ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն սանձազերծած յարձակումներուն ու հալածանքներուն եւ հակազգային գործունեութեան ի տես, ՀՀԴ Բիւրոն բացարձակապէս անընդունելի կը գտնէ այդ բոլորին հեղինակ անձը արժանացնել Կիլիկիոյ կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա.-ի յատուկ ուշադրութեան, ինչ որ արդարօրէն յառաջացուցած է սփիւռքի եւ հայրենիքի հայ հանրութեան բռննչ ընդվզումը:

Հայրենիքի մէջ տեղի ունեցածը ծրագրուած յարձակում է ոչ միայն Հայ եկեղեցւոյ, այլ նաեւ հաւատաւոր ողջ հայ ժողովուրդին, անոր ինքնութեան եւ ազգային նկարագրին վրայ, եւ երբեք կարելի չէ զայն ընկալել իբրեւ եկեղեցւոյ եւ պետութեան միջեւ հակամարտութիւն:

Այս օրերուն ՀՀ իշխանութիւններուն կողմէ բարձրաստիճան հոգեւորականներու կալանաւորումներն ու եկեղեցւոյ թիրախաւորման դատապարտելի վարքագիծը հրամայական պահանջ կը ստեղծէ՝ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ կաթողիկոսական աթոռներուն համընդհանուր ճիգերով պաշտպանել հայ ժողովուրդի կեանքին մէջ բացառիկ ազգային արժէք ներկայացնող եկեղեցին:

Մեր յորդորն է, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցւոյ երկու կաթողիկոսներու սերտ համագործակցութեամբ եւ իրենց շուրջ համախմբուած մեր ժողովուրդի անմնացորդ աշակցութեամբ՝ Հայ եկեղեցին պաշտպանուի ամեն տեսակ քանդիչ, հայ ժողովուրդի ինքնութիւնը խաթարող եւ Նսեմացնող ներքին ու արտաքին ոտնձգութիւններէն:

ՀՀԴ ԲԻՒՐՈ


17 հոկտեմբեր 2025

ԵՐՈՊԱՅԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶՊԵՅՃԱՆԻՆ
ԿՈՉ Կ՛ՈՒՂԴԷ ԱՊԱՅՈՎԵԼՈՒ
ԱՐՑԱԽԱՅԱՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

ՀՀԴ Բիւրոյի հանրային կապերու գրասենեակը կը հաղորդէ, որ Ամբաստանաւորութեան մէջ ընթացող Եւրոպայի ընկերվարականներու կուսակցութեան համագումարը երեկ ընդունած է շարք մը բանաձեւեր, ուր տեղ գտած են ՀՀ Դաշնակցութեան կողմէ ներկայացուած դրոյթներ:

Մասնաւորապէս՝ Եւրոպայի ընկերվարականներու կուսակցութիւնը Ազրայիճեանին կոչ ուղղած է ազատ արձակելու բոլոր հայ գերիները, թոյլատրելու արցախահայութեան վերադարձը միջազգային դիտարկումը պայմաններուն մէջ եւ ապահովելու

Շար.ը՝ էջ 8



ՄԱՐԱԿՈՒ. «ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏՐԱՍԵ Է ԻՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ
ՆԵՐԳՐԵԼՈՒ «ԹՐԱՄՓԻ ՈՒՂԻ»
ՆԱԽԱԳԻԾԸ ԵՒ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ
ԽԱԶՄԵՐՈՒԿ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ
ԿԵԱՆՔԻ ԿՈՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Եւրոպական Միութիւնը պատրաստ է իր գործիքները ներդրելու ոչ միայն «Թրամփի ուղի» նախագիծի, այլ նաեւ ամբողջ «Խաղաղութեան խաչմերուկ» նախաձեռնութեան ծիրին մէջ կապակցուածութիւնը խթանելու համար:

Շար.ը՝ էջ 2

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ. «ՀԱՐԱԻԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՌՈՂ ՅԱՐԶԱԿՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԱՒԵՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԷ»



Հանրապետության նախագահ Ժոզեֆ Աուն դատապարտեց հինգշաբթի գիշեր հարաւային Լիբանանի մէջ շարք մը գիւղաքաղաքներ եւ քաղաքային կառոյցներ թիրախաւորած խրայէլեան յարձակումները:

«Իսրայէլեան շարունակուող յարձակումը արտադրողական ենթակառոյցներու աւերման եւ կեղծ անվտանգութեան պատրուակներով լիբանանեան աւերուած շրջաններու վերականգնումը խոչընդոտելու համակարգուած քաղաքականութեան մաս կը կազմէ», նշեց նախագահը:

«Այս մագլցողական վարմունքը մեծ խախտում է ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 որոշումին եւ 2024 թուականի թշնամական արարքներու դադրեցման համաձայնութեան եւ կը հաստատէ, որ Իսրայէլ կը շարունակէ ոտնահարել իր փրկագային յանձնառութիւնները եւ ուժ կիրարկել օրինական որեւէ ծիրէ կամ միջազգային լիազօրումէ դուրս, ինչ որ կը պահանջէ միջազգային կեցուածք մը, որ այդ դատապարտելի խախտումներուն վերջ կու տայ», յայտնեց նախագահ Աուն:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ



● «ԱԵՊԱՐ» օրաթերթ. «Լիբանան յառաջիկայ շաբաթ պիտի հիւրընկալէ լիբանանեան-սուրիական «ապահովական վեհաժողով» մը՝ մասնակցութեամբ սուրիական ապահովական բարձրաստիճան պատուիրակութեան մը, որուն մաս կը կազմեն տարբեր ապահովական մարմիններու պետեր՝ նախագահութեամբ Սուրիոյ ներքին գործոց նախարարի ապահովական հարցերով օգնականին»:

● ԼԱՄԱՏԵՐԵԱԿ նախարարական աղբիւր մը «Ախպար» օրաթերթին. «Վարչապետ Սալամ Ժաօրէն աշխատանքային այցելութեամբ պիտի մեկնի Փարիզ՝ ֆրանսական ղեկավարութեան հետ քննարկելու Լիբանանին աջակցութեան խորհրդաժողովներուն առջեւ ծառացած խոչընդոտներու վերացման կարելիութիւնները եւ իր համար Լիբանանի հարցով սեւուցի պատուիրակին հետ ժողովի դասաւորում խնդրելու համար»:

● ԴԻԲԱԼԱԳԻՏԱԿԱՆ աղբիւրներ «Տիար» օրաթերթին. «Ուաշինկթըն որական ջնկակաց նախագահ Աունի խօսքը եւ անոր մէջ կրկնութիւն կը տեսնէ նախկին կեցուածքներու, որոնք այլեւս զարգացման կը կարօտին, մասնաւոր անկեղծօրէն Լիբանանի՝ Իսրայէլի հետ ուղղակի որեւէ բանակցութեան մերժման մասին խօսեցաւ»:

● ԼԱՄԱՏԵՐԵԱԿ աղբիւրներ «Ժուհուրիա» օրաթերթին. «Լիբանանեան թղթածրարը ներկայիս սառեցուած է, սպասելով շրջանին մէջ պատկերի յստակացման, մասնաւոր ինչ կը վերաբերի Կազայի եւ Սուրիոյ»:

● ԼԱՄԱՏԵՐԵԱԿ աղբիւրներ «Ժուհուրիա» օրաթերթին. «Իսրայէլեան իրերայաջորդ յարձակումները, որոնք երբեմն մագլցում կ'արձանագրեն եւ երբեմն ալ՝ նահանջ, Լիբանանը ճնշումի տակ պահելու համար են, եւ հաւանական է, որ ներկայ ընթացքը շարունակուի, ուստի լիբանանեան կացութիւնը ցնոր տնօրինութիւն պիտի մնայ ոչ պատերազմի եւ ոչ խաղաղութեան սահմաններուն մէջ»:

● ԴԱՏԱԿԱՆ իշխանութիւնը երէկ որոշեց 11 միլիոն տոլար երաշխաւորագիծի դիմաց ազատ արձակել Հանիալ Զազաֆին, արգիլելով անոր երկրէն հեռանալը:

● 95 եւ 98 օքթան պենզիններու գիները նուազեցան 21.000 լ.ն.-ով եւ յաջորդաբար հասան 1.415.000 լ.ն.-ի եւ 1.455.000 լ.ն.-ի, մագութին գիները նուազեցան 17.000 լ.ն.-ով եւ հասան 1.334.000 լ.ն.-ի: Պիւթակազին գինը մնաց անփոփոխ՝ 1.102.000 լ.ն.:

ԾՈՎ. ԸՈՒԹԸՐ. «ՅԱՆՁՆԱՌՈՒ ԵՆՔ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՍՐԱՊՆԴՄԱՆ ԱՆՈՐ ԱՆԵՈՆՁ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՄԵՋ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻ ԶԱՆԶԵՐՈՒՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ»

Ամերիկեան բանակի կեդրոնական հրամանատարութեան պետ Ծով. Պրատ Զուլփը յայտարարեց. «Յանձնառու ենք շրջանային անվտանգութեան ամրապնդման անոր անխոնջ աշխատանքին մէջ լիբանանեան բանակի ջանքերուն աջակցելու, եւ մեր լիբանանցի գործընկերները կը շարունակեն ճգնաժամային զինաթափման յաջողութիւնը երաշխաւորելու ջանքերը ղեկավարել»:

Մինչ այդ, Լիբանանի մէջ ամերիկացի զինուորական ներկայացուցիչը յայտնեց. «Լիբանանի մէջ խաղա-



ղութեան եւ կայունութեան պահպանման հասարակաց շահ ունինք»:

«Բանակին, ՖԻՆԻԼ-ին եւ մեր միջազգային գործընկերներուն հետ կ'աշխատինք զինադադարի ծիրի յաջողութիւնը երաշխաւորելու համար», աւելցուց ան:

ՈԱԺԺԻ ՄԱԿ-Ի ԳԱՐԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ ԸՆՆԱՐԿԵՑ ՍՈՒՐԻԱՅԻ ԳԱՐԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Եուսէֆ Ռաժժի ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի գաղթականներու հարցերու յանձնակատարի Նոր ներկայացուցիչ Զարուիան Լիւնտիւմ Պիլինկը, որ իր հաւատարմագիրն երը ներկայացուց:

Հանդիպումի ընթացքին ըննարկուեցաւ դէպի Լիբանան սուրիական գաղթի թղթածրարը: Ըննարկուեցան ՄԱԿ-ի գաղթականներու հարցով կազմակերպութեան եւ յանձնակատարութեան հետ



գործակցաբար եւ սուրիական իշխանութիւններուն հետ համակարգումով լիբանանեան կառավարութեան որդեգրած ծրագիրին հիմամբ տեղահանուածներու տունդարձը ապահովելու ջանքերը:

ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

անմիջապէս աշխատանքի սկսին կազմակերպելու վեհաժողով մը, որ կրնայ տեղի ունենալ, օրինակ՝ Պուտինի մէջ»:

«Ըննարկումը տեղի ունեցաւ Ռուսիոյ նախաձեռնութեամբ: Անկիւ շատ խորքային էր, եւ միեւնոյն ժամանակ շատ անկեղծ եւ վստահութեան վրայ հիմնուած», ըսաւ ան:

«Փութին Թարմփին հաստատեց ուղբանական տագնապի քաղաքական կարգաւորման նկատմամբ Ռուսիոյ յանձնառութիւնը», նշեց Ուշաքով:

Քրեմլին աւելի ուշ հաղորդագրութիւն մը հրապարակելով իր կարգին նշեց. «Փութինի նախաձեռնութեամբ վստահութեան վրայ հիմնուած շատ յստակ հեռաձայնային հաղորդակցութիւն կատարել է տեղ, անմիջա-

պէս Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի եւ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի միջեւ վեհաժողովի պատրաստութիւնը պիտի կատարուի»:

Հունգարիոյ վարչապետ Վիլթոր Օրպան եւս յայտարարեց. «Փութինի եւ Թրամփի միջեւ հանդիպումը կըրնայ ընդամենը երկու շաբաթէն տեղի ունենալ: Հունգարիոյ մէջ արդէն ստեղծուած է կազմակերպչական կոմիտէ՝ երկու ղեկավարներու այցելութիւնները նախապատրաստելու համար»:

«Ռուսիոյ եւ Լատուիոյ պիտի փորձեն մէկ շաբթուան ընթացքին լուծել մնացած հարցերը, իսկ յետոյ՝ մէկ շաբաթ անց, անոնք պիտի կարենան գալ այստեղ՝ Պուտինի մէջ, նշած է Օրպան:

ՄԱՐԱԿՈՒ. «ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԻՐ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Արմէնփրես»-ի համաձայն, Սիւնիքի մարզին մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին այս մասին ըսած է Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Վասիլիս Մարակոս՝ խօսելով Ուաշինկթընի մէջ 8 օգոստոսի Հայաստանի, Ազրայէժանի եւ Միացեալ Նահանգներու ստորագրած փաստաթուղթերու մասին:

«Երադարձութիւնները եւ հանդիպումները, որոնք 8 օգոստոսին եղան Ուաշինկթընի մէջ, Եւրոպական Միութեան կողմէ ողջունուած են, եւ մենք այդ օրուրէն ի վեր պատրաստակամութիւն յայտնած ենք աջակցելու այդ նախաձեռնութիւններուն եւ կապակցուածութեան:

«Մենք շատ երջանիկ ենք մեր գործիքները ներդրելու ոչ միայն «Թրամփի ուղի» նախագիծի ծիրին մէջ, այլ նաեւ ամբողջ «Խաղաղութեան խաչմերուկ» նախաձեռնութեան ծիրին մէջ, որ ողջունուած է Եւրոպական Միութեան կողմէ տակաւին երկու տարի առաջ, երբ Հայաստանի կառավարութիւնը ատոր մասին յայտարարեց», ըսած է Մարակոս:



Դեսպանը աւելցուցած է, որ Եւրոպական Միութիւնը հետեւողականօրէն կ'աջակցի Հայաստանի Կովկասի մէջ խաղաղութեան:

«Մենք շատ երջանիկ ենք, որ խաղաղութիւնը կու գայ: Շատ մանրամասնութիւններ տակաւին պետք է պարզաբանուին, սակայն մենք այստեղ ենք՝ իբրեւ Հայաստանի, հայ ժողովուրդի եւ Հայաստանի կառավարութեան յուսալի գործընկերներ, որպէսզի այս գործընթացին մէջ ձեզի սատարենք», նշած է Մարակոս:

ԹԵՅՐԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ



Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Իսմայիլ Պաղայի նշեց. «Իսրայէլեան բանակին երէկ ցերեկն ու գիշերը հարաւային Լիբանանի մէջ գտնուող թիրախներու դէմ գործադրած յարձակումները Լիբանանի տարածքային ամբողջականութեան եւ ազգային գերիշխանութեան բացայայտ ոտնահարում էին»:

Ան բուն կերպով դատապարտեց նշեալ ոտնահարումները:

Անդրադառնալով զինադադարի համաձայնութեան իրերայաջորդ խախտումներուն՝ Պաղայի յայտնեց. «Այս կացութիւնը հետեանք է համաձայնութեան հովանաւորներ Փրանսայի եւ Ամերիկայի թերացումին»՝ ընդգծելով. «այս ուղղութեամբ երկու երկիրներու ուսերուն ինկող ուղղակի պատասխանատուութիւնը»:

Յիշեցնենք, որ իսրայէլեան օդուժը հինգշաբթի երեկոյեան ժամը 8:00-էն ետք շարք մը բուն յարձակումներ գործեց Հարաւային Լիբանանի Անսար Եւ Չրարիէ գիւղաքաղաքներուն միջեւ գտնուող տարածքին վրայ: Ռմբակոծումներուն արձագանքը լսուեցաւ Սալայի եւ Իքլիմ Խարրուպի մէջ:

Շատ որոշ տուեալներու, անկիւ անցեալ նոյեմբերին զինադադարի համաձայնութեան կնքումէն ի վեր համաձայնութեան մեծագոյն ոտնահարում էր:

Իսրայէլեան բանակի բանբեր Ալիսայ Ատրահի մէկ օր առաջ պնդեց. «Հարաւային Լիբանանի Մագրաաթ Սիւայ շրջանին մէջ օդային յարձակումները թիրախաւորեցին ենթակառոյցներ, որոնք ճգնաժամի օգտագործեց իր զինուորական ուժը վերականգնելու իր փորձերուն մէջ»:

ՈՒԹԵՐՈՖ. «ՀԱՄԱՍ ԿԱԶԱՅԻ ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Վստահ եմ, որ սպաննուած բոլոր գերիներու դիակները պիտի վերադարձուին», աւելցուց ամերիկացի պատուիրակը:

Իսրայէլեան «Իսրայէլ Հայոմ» օրաթերթը մէկ օր առաջ հաղորդած էր, թէ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու հինգշաբթի գիշեր Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի հետ քննարկած է Կազային գերիներու դիակներու վերադարձման կշռոյթը:

ՍԱԼԱՄ ԱՌԻՆԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Ըննարկուեցան նաեւ Շարմ Շէյխի խորհրդաժողովէն ետք շրջանային զարգացումները, ինչպէս նաեւ նախարարաց խորհուրդի յառաջիկայ շաբթուան նիստի պատրաստութիւնները:

Սալամ առանց յայտարարութիւն կատարելու մեկնեցաւ Պաալտայի պալատէն եւ ուղղուեցաւ Այն Թինէ, ուր հանդիպում ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ԲԱՂԱՔԱԿԱՆ...»

Շարունակուած Ա. Էջէն

Նկատմամբ յանձնառութիւնը, առանց առօրեայ անհեթեթ բանավեճերու մէջ մտնելու», նշեց ան:

«Մեր սկզբունքներէն է այն, որ Լիբանան իսրայէլեան տիրապետութեան դիմաց աշխարհագրական ու քաղաքական խոչընդոտ էր եւ է, ճիշդ ինչպէս Հայաստանը էր եւ տակաւին է իր բնական իրաւունքները նկատածին ուղղութեամբ թրջական ծաւալումին դիմաց», ըսաւ երեսփոխանը:

Բագրատունի նաեւ նշեց. «Իսրայէլացիին խընդիրը այն է, որ անոր յաղթանակները առժամեայ են, որովհետեւ իշխողութեան վրայ կարելի չէ յաղթանակ արձանագրել»:

ՊԱՇՏՈՆԵԱՅ ԿՈՒԶՈՒԻ

Bijouterie GARO (Գրիգորեան) կարիքը ունի քարտուղարուիի, հաշուապահուիի եւ մոմի վրայ աշխատողի մը:
Պուրճ Համուտ, հեռ. 01-266514 կամ 03-207772:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳԵՐՈՐ ՓՕԼԱՏԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 19 հոկտեմբեր 2025-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀՕՄ)


(115-ԲԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ ԱՌԻԹՈՎ)

Այս օրերուն՝ 15-25 հոկտեմբեր, Հայ օգնութեան միութիւնը՝ ՀՕՄ-ը, իր 115-րդ տարեդարձը մեծ շուքով կը տօնէ Երեւանի մէջ: Անկէ 115 տարիներ առաջ՝ 1910-ին, հիմը դրուեցաւ սփիւռքահայ ամենէն ծաւալուն կազմակերպութիւններէ մէկուն՝ Հայ օգնութեան միութեան: Ան անցեալի մէջ քանի մը անուններով ճանչցուած է: Իր ծննդեան անունը եղած է «ՀՅԴ Կարմիր խաչ», որուն հիմնադիր ըլլալու պատիւը կը պատկանի 20-րդ դարու սկզբը-նական տարիներուն հանրածանօթ դաշնակցական գործիչ Խաչատուր Մալումեանի, որ ծնածօք է Նաեւ Է. Ակնունի անունով: Ակնունի յատուկ առաքելութեամբ Ամերիկա եկաւ եւ երկար շրջապտոյտէ մը եւ բազմաթիւ հանրային ելոյթներ տալէ ետք, Նիւ Եորք քաղաքի մէջ հիմնադրեց «ՀՅԴ Կարմիր խաչ»-ը: Շուրջ տասնամեակ մը յետոյ, Հայաստանի Հանրապետութեան շրջանին, Նկատի ունենալով, որ Հայաստանի մէջ արդէն հիմնուած էր պետական Կարմիր խաչը, կազմակերպութեան Բ. Պատգամաւորական ժողովը որոշեց կապուիլ Հայաստանի Կարմիր խաչին եւ կոչուիլ «Դատերը Հայաստանի»: Ապա շրջան մը ան կոչուեցաւ «Հայ կարմիր խաչ»: Իսկ 1946-ին «Հայ կարմիր խաչ» անունը փոխուեցաւ, եւ այնուհետեւ այս կազմակերպութիւնը կոչուեցաւ «Հայ օգնութեան միութիւն»: Ներկայիս ՀՕՄ-ը ունի բազմասարիւր մեծ եւ փոքր մասնաճիւղեր՝ 23 տարբեր երկիրներու մէջ:

ՀՕՄ-ը մարդասիրական եւ հայանուէր կազմակերպութիւն մըն է, որուն գլխաւոր նպատակն է ազգապահպանում կամ հայապահպանում: Նուիրեալ անդամներէ բաղկացած այս միութիւնը իր ամբողջական օժանդակութիւնը բերած է եւ կը շարունակէ բերել բազմաթիւ միջոցներով: Անցնող տասնամեակներուն ան իր օգնութիւնը հասցուցած է՝ հայ որդին եւ այրիին, հիւանդին ու ջատարհին, ուսանողին ու դպրոցին, զինուորին ու տարագիրին: Այս առաջարկութեամբ, սփիւռքէ բոլոր հայաշատ գաղթածայիներու մէջ ՀՕՄ-ը հիմնեց՝ ընկերային ու առողջապահական կեդրոններ, մանկամուտքներ եւ վարժարաններ, պատուարաններ, տարեցներու յատուկ հաստատութիւններ, հայկական ձեռնարկութիւն կեդրոններ: Ան մշակեց ազգապահպանման յատուկ ծրագիրներ՝ հայ սերունդներու ազգային դիմագիծը պահպանելու ի խնդիր: Ան սատարեց՝ ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցներու հիմնադրութեան, հայ ուսուցիչներ պատրաստելու, ամառնային ճամբարներ հիմնելու, կրթական եւ մշակութային հիմնադրամներ հաստատելու նուիրական աշխատանքին:

Ժամանակներու հետ յարմարող եւ ճշող կարիքներու գիտակից՝ այս միութեան մտասէւեռումը եղած է հայը հայ պահել՝ ֆիզիքապէս, մտովին եւ հոգեպէս: Այսպէս, 1910-1920 առաջին տասնամեակին ան իր նիւթաբարդական աշխատանքը յատկացուց՝ հայ որբերուն, գաղթականներուն եւ հիւանդներուն: Հաստատեց դասընթացներ տուներու մէջ՝ անգրագետ հայ կիներու համար, օգնեց Հայոց ցեղասպանութենէն մազապուրծ ազատած իր սովամահ հայրենակիցներուն եւ հոգաց Հայաստանի Ա. Հանրապետութեան ընկերային պետներուն:

1920-1930-ի տասնամեակին ՀՕՄ-ը գաղութ գաղութ կապեր հաստատեց, Եւրոպայի ցամաքամասին եւ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ Նոր մասնաճիւղեր կազմակերպեց եւ հայ գաղթական-



սանուիներու եւ արծուիներու խումբեր՝ հայապահպանման նպատակին համար:

1930-1950-ի միջեւ տարածուող երկու տասնամեակները ՀՕՄ-ին առջեւ բացին Նոր մարտահրաւերներ, որոնցմէ գլխաւորներն էին՝ հաւաքել որբորբուհիները թուրքերու, քիւրտերու եւ արաբներու տուններէն, պատսպարել եւ հայացնել զանոնք, հիմնել մանկապարտէզներ, դպրոցներ եւ ճեմարաններ, միանգամայն Նաեւ խնամել բազմաթիւ հիւանդներ, գործ ճարել, սնունդ եւ բնակարան հայթայթել անգործ ջատարհներուն: Այս առաջարկութիւններով ՀՕՄ-ը գործի լծուեցաւ իր օգնութիւնը հասցնելու՝ դրամով, հազուատեղէններով, դեղորայքով, գրեական պիտոյքներով, հոն, ուր կարիքը կար: Արիւստանոցներ, դարմանատուններ եւ սնունդի կայաններ բացաւ Յունաստանի ու Սուրիոյ մէջ, ուր Տեղասպանութենէ վերապրողներ ապաստան գտած էին: Ասոնց կողքին, միութիւնը լծուեցաւ կրթական եւ մշակութային գործի:

Ամերիկայի հայաշատ քաղաքներու մէջ միօրեայ դպրոցներ բացաւ ամերիկածին հայ Նոր սերունդներուն հայոց լեզու եւ Հայոց պատմութիւն սորվեցնելու նպատակով: Բաց աստի, ՀՕՄ-ը Նաեւ բարոյապէս եւ նիւթապէս նեցուկ եղաւ՝ Պէրյուքի Նշան Փալանճեան, Հայկաթի Զարէն Եփփէ եւ Սոֆիայի Մետրոպոլիտան Ճեմարաններուն: Իսկ Բ. Համաշխարհային պատերազմի վարորդային դարձեալ լծուեցաւ պատերազմի պատճառով աղետակներուն օգնելու գործին: Այդ ժամանակամիջոցին միութիւնը հաստատեց կարգ մը մայրուն ձեռնարկներ, ինչպէս՝ «Հայ օգնութեան միութեան օր»-ը, «Պսակ մը կը խնկուրի օր»-ը եւ «Ծոմապահութեան օր»-ը, որոնք հաստաբարեք միջոցներ եղան միութեան այլեայլ գործունէութիւններուն համար: Այս շրջանին Նաեւ (1939) ՀՕՄ-ը սկսաւ հրատարակել իր եռամսեայ օրկան «Հայ Սիրտ»-ը, որուն նպատակն է եղած պատրաստել գիտակից հայ մայրեր, զարկ տալ Նոր սերունդի դաստիարակութեան, առողջ պահել հայ ընտանիքը եւ մղել հայ կինը հաւաքական աշխատանքի:

ՀՕՄ-ի 1950-1975-ի քառորդ դարու շրջանը կը յատկանշուի կրթական-մշակութային մտասէւեռումով: Այս շրջանին ան հիմնեց երեկոցեան դասընթացներ՝ տարբեր վայրերու մէջ, հաստատեց՝ կրթաթոշակներ, ամառնային ճամբարներ, ամառնային հայագիտական դասընթացներ, հիմնեց մշակութային հիմնադրամներ՝ օժանդակելու համար կարօտ հայ մտաւորականներու, գրագետներու, ուսուցիչներու եւ արուեստագետներու: Նաեւ այս ժամանակաշրջանին ՀՕՄ-ը նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնեցաւ Ամերիկայի եւ Զանա-տայի մէջ ամէնօրեայ Նոր դպրոցներ հիմնելու ծրագրին: Առ այդ, ան կրցաւ ապահովել կարգ մը բարերարներ, ինչպէս Նաեւ կարգ մը կրակներ՝ յաջողցնելու իր կրթական եւ մշակութային ծրագիրները:

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀՄԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ


Շար.ը՝ էջ 6

«ԱՆԴԱԿ»-Ի 81-ՐԴ ԱՌՅԱՆՑ ԼՍԱՐԱՆ

ՀԱՅ-ՃԱՓՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Հինգշաբթի, 16 հոկտեմբերի երեկոյեան տեղի ունեցած «Ազդակ»-ի 81-րդ առջանց լսարանի նիւթն էր «Հայ-ճափոնական միջպետական յարաբերութիւնները եւ հայագիտութիւնը ճափոնի մէջ»: Դասախօսն էր Թոքիոյի համալսարանի օտար լեզուներու բաժնի դասախօս դոկտ. Թաքայոքի Եոշիմուրա: Լսարանը վարեց «Ազդակ»-ի ելեկտրոնային բաժնի աշխատակից Մինաս Հանս Բէիեան:

Դոկտ. Եոշիմուրա խօսեցաւ հայոց ժամանակակից պատմութեան տարբեր փուլերուն, յատկապէս Խորհրդային Միութեան օրերուն ներգաղթի երեւոյթներուն վերաբերեալ իր կատարած գիտաշխատութիւններուն




ճափոններէ-հայերէն բառարանի կազմութեան եւ հայագիտութեան տարբեր ոլորտներուն:

Դոկտ. Եոշիմուրա Ներկայացուց Նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան ճափոնի հիւպատոս Նշանակուած Տիանա Աբգարին կեանքի առաքելութեան փուլը, ճափոն ապրած հայ հացափառաւիան Սազոյեանը, Հայաստանի իրերայաջորդ դեսպաններու գործունէութիւնը, Կոմիտասի անուն երաժշտական ընկերութեան կազմակերպած համերգները, ԹՈՒՍՕ-ի գործունէութիւնը Թոքիոյի մէջ եւ հայ-ճափոնական մշակութային ոլորտի համագործակցութիւնը:

Դասախօսութեան ամբողջութիւնը կարելի է ունկնդրել միանալով «Ազդակ»-ի եւթօրեայեան ալիքին

<https://www.youtube.com/watch?v=aEppSqzF25Q>

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ. ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻՄԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՄԱՀ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ



Հայ ժողովուրդի Նորագոյն պատմութեան մէջ արձանագրուած են Էջեր, որոնք չեն պատկանիր միայն անցեալին, այլ կենդանի վկայութիւն կը մնան՝ մեր հաւատքին, մեր կամքին եւ մեր ինքնութեան անսասան ոգիին: Այդ ոգեկոչող էջերէն մէկը կը հանդիսանայ Հաճնոյ ութամսեայ հերոսամարտը:

Ֆրանսական իշխանութիւններուն Կիլիկիան քեմալական Թուրքիոյ յանձնելէ անմիջապէս ետք բռնութեան եւ մահուան դաշտերու վերածուեցան Կիլիկիոյ հովիտները: Յուսափաբ հայը ըմբոստացաւ բռնութեան եւ անիրաւութեան դէմ: Ինքնապաշտպանութեան շարժումները, որոնք սկիզբ առին Կիլիկիոյ տարբեր շրջաններուն մէջ, մարմաւորեցին հայ ժողովուրդին անապարտելի կամքը:

Մահուան ստուերը տարածուեցաւ Կիլիկիոյ հայկական լեռնաշխարհի ու հովիտներուն վրայ: Զեմալական իշխանութիւնները Տեղասպանութիւնը շարունակելով՝ իրենց սեւ ձեռքը ուղղեցին Հաճնոյ հայրերուն վրայ: Զաղաքին բնակիչները մերժեցին անձնատուր դառնալ: Անոնք համախմբուեցան եւ զենք բարձրացուցին՝ ի պաշտպանութիւն իրենց կեանքին, ընտանիքին եւ սրբազան հողին:

Հաճնը դարձաւ ճակատամարտի բեմ: Հաճնոյ հերոսամարտը միայն ինքնապաշտպանական ճակատամարտ չէր: Ան եղաւ վկայութիւն մը, որ հայ ժողովուրդը պատրաստ էր իր կեանքը զոհել, միայն թէ պահէր իր հողը եւ արժանապատուութիւնը: Մայրերու արցունքով, զաւակներու գոհողութեամբ եւ հերոսներու քաջութեամբ կը գրուէր Նոր էջ մը, ուր հաճնցի կը պաշտպանէր իր ծննդավայրին մէջ խաղաղ ապրելու իրաւունքը:

Ութ ամիս շարունակ հաճնցիները դիմադրեցին թրջական զօրագուններուն ու քրտական զինուած մարիներուն: Զաղաքը վերածուեցաւ ամրոցի, ամեն փողոց, ամեն տուն դարձաւ պաշտպանական դիրք: Հայրը, մայրը, երիտասարդը, քոյրը՝ բոլորը դարձան կամաւոր: Անոնք սրտի զարկներուն մէջ կը բաբախէր ազատ ապրելու վճռականութիւնը: Հաճնոյ ինքնապաշտպանութիւնը դարձաւ ազգային ոգիի հարազատ դրսեւորում՝ իյնեցնելով Վարդանանց հերոսամարտը, Չէլթուի կ'Վանի ինքնապաշտպանութիւնները:

Թշնամին, բազում անգամներ գերազանց ուժերով փորձեց ճեղքել պաշտպանութեան օղակները, բայց հանդիպեցաւ հաճնցիներուն հերոսական դիմադրութեան: Այդ ութ ամիսները դարձան անմահութեան օրեր, ուր հաճնցիին ապացուցեց, որ արժանապատուութիւնը եւ ազատութեան իղձը անելի վեհ են, քան՝ վախը:

Հաճնը մոխիր դարձաւ, բայց անոր խիզախումը մեր պատմութեան մէջ արձանագրուեցաւ իբրեւ հայրենասիրութեան ու կամքի անյաղթելի դրսեւորում:

Այսօր, երբ կը իյնեն Հաճնոյ եղերական հերոսամարտը, չենք կրնար կեդրոնաւալ միայն ողբերգութեան վրայ: Մենք կը իյնենք արծուաբոյնի աննահանջ ոգին: Անոր բնակիչները իրենց ամենաթանկը զոհեցին եւ պատուով Նահատակուեցան: Հաճնոյ հերոսները մեզի սորվեցուցին մինչեւ վերջին շունչը պաշտպանելու սրբութիւնները:

Հաճնոյ ինքնապաշտպանութիւնը մեր պատմութեան էջերուն մէջ յանձնեցաւ իբրեւ հայրենասիրութեան, կամքի եւ հերոսութեան դրսեւորում:

Անոնք, որոնք իրենց մատաղ կեանքը ընծայեցին Հաճնի, լուռ պատգամ մը թողուցին՝ հայրենասիրութիւնը չի չափուիր միայն խօսքով, այլ՝ արեան գնով:

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարը լոկ քաղաքական կամ զինեալ դրսեւորում չէր, այլ՝ արժանապատուութեան եւ գոյատեւումի ճիշդ: Հայոց դարերու ընթացքին իրաւագրկուած էր օրէնքի առջեւ: Իր հողին տէրը չէր, իր տունը ապահով չէր: Թուրքը եւ քիւրդը կ'անտեսէին ու կը խլէին հայուն իրաւունքները, անվրէժ եւ անարդար տուրքեր կը սահմանէին: Բռնութիւն, առեւտագում, սպանութիւն ու տեղահանութիւն: Հայը մնա-

ցած էր անպաշտպան: Հայուն ընդվզումը արդար էր եւ՝ պատմական անհրաժեշտութիւն:

Այսօր, երբ կը տառապինք Նոր տահրաւերներու առջեւ, եւ հայրենի հողերու կորուստը կը ճնշէ մեր ներաշխարհին վրայ, անհրաժեշտ է, անելի քան երբեք, վերաործելու մեր մտահայաստանի եւ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան էջերը: Ազատութիւնը պարգեւ չէ, այլ՝ յարատեւ պայքար: Անկախ պետութիւն ունենալ՝ կը նշանակէ զայն պաշտպանել գոհողութեամբ ու Նուիրումով:

Այսօր, երբ կը թղթատենք մեր պատմութիւնը, յստակ կ'երեւի, թէ հայ ժողովուրդին ընդվզումը պատմական անհրաժեշտութեան հետեւանք էր: Ան ծնունդ առաւ այն հողին վրայ, ուր դարեր շարունակ գոյատեւած է՝ պահելով մշակոյթը, հաւատքը եւ իշխողութիւնը: Ազատագրական պայքարը հայուն կենդանի պատմութիւնն է. Նոյնիսկ ամենածանր պայմաններու մէջ կարելի է յառնել, ոտքի ելլել եւ պահանջել արդարութիւն:

Հաճնը սրբավայր մը դարձաւ, ուր բոլոր մը հայեր բոցեղէն հոգիներով դիմադրեցին կայսրութեան ահաւել ուժերուն:

Տրամադրութեանս տակ ունիմ Հաճնոյ պաշարումի օրերուն Ինքնապաշտպանութեան խորհրդի անդամ եւ ինքնապաշտպանութեան Բ. վաշտի հրամանատար, կնքափորս՝ Մետրոպ Շիրտըմեանի փոստային բացիկը: Ան կը գրէ հարազատի մը. «1920 փետրուար եւ մարտ ամիսներուն Հաճնի ինքնապաշտպանութեան արեւելեան դիրքերու հրամանատարութեամբ Կեօյնիկի եւ Դործուղազի ձիւնապատ լեռնաշղթաներուն մէջ, թըշնամի յառաջխաղացումի դէմ գտնուած տարագուկ ներկայացող սոյն նկարը կը Նուիրէ ի յիշատակ հայրենիքի անմոռացութեան»:

Հաճնոյ պաշարուած ամիսներուն գրուած այդ տողերը կը փոխանցեն անմահ պատգամ մը՝ «Ի յիշատակ հայրենիքի անմոռացութեան»: Հաճնցիին իր ձեռքով կը գրէր ոչ թէ վախի խօսք, այլ՝ իշխողութեան ու յաւիտենական ուխտ: Մահուան ճամբորդ մարտիկի ոգին ծնած սրբազան ուխտ:

Հաճնոյ հերոսամարտը այս իմաստով ոչ միայն եղերապատում մըն է, այլ՝ պատգամ. ամեն բան կարելի է կորսնցնել, բայց՝ պահել այն մէկը, որ բոլորէն անելի կարելորդ է՝ հայրենիքի անմոռացութեան յիշատակը:

Ազատագրական պայքարի պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, որ հայուն արժանապատուութիւնը երբեք չի թաղուիր: Արդարութեան ձայնը միշտ ալ կը հասնի դարերուն խորքէն մինչեւ ներկան: Հետեւաբար մեր պարտականութիւնն է այսօր ալ շարունակել պահել այդ ոգին՝ գիտակցելով, որ առանց պայքարի եւ յամառութեան՝ ոչ մէկ իրաւունք կը շնորհուի մեզի:

Մեր հերոսական էջերէն կարելորդ թելակներու յիշատակումը չի նշանակել խարխափել անցեալի մէջ: Անոնք յարատեւ պիտի մնան մեր իշխողութեան մէջ, սնուցանեն մեր մտածողութիւնը, մեր գործողութիւնները:

Ազատագրական պայքարի էջերը անկարելի է լուսանցեցնել մեր առօրեայէն: Անոնք, որոնք կ'անարգեն մեր անլռելի յիշատակարանները, կը մոռնան, որ առանց արմատներու՝ ծառ մը չի ծաղկիր: Մեր ժողովուրդը այսօր, անելի քան երբեք, անհրաժեշտութիւնը ունի՝ ոգեկոչելու անցեալի փառապանծ էջերը, պահպանելու Նախորդներէն կտակած ոգին: Առանց անցեալի՝ ներկան կը դառնայ փրկուի, իսկ ապագան՝ անորոշ:

Փառք Հաճնոյ առիձներուն: Հաճնը ինկաւ, Հաճնը կ'ապրի:

Կը խոնարհիմ ողբերգական դիցազամարտի բոլոր Նահատակներուն յիշատակին առջեւ: Խունկ եւ աղօթք՝ ազատագրական պայքարի մեր բոլոր Նահատակներուն:

ԱՅՐԱՐՈՆ ՇԱՐՏԵՍԵԱՆ



մասին: Ծափոնցի հայագետին ուսումնասիրութիւնները կը վերաբերեն կովկասագիտութեան,

ԺԵՆԵՐԱԼԸ...



Մինչև չորրորդ դասարան կը յաճախէ Այնճարի Յառաջ-Գալուստ Կիւլպէնկեան ազգային վարժարան:

Հայրս Պէյրուք կ'աշխատէր, իսկ մենք կը բնակէինք Այնճար, մինչև որ մենք ալ փոխադրուեցանք Պէյրուք:

Ձգեցի Այնճարը, ընկերներս, մայր գիւղս եւ գացի քաղաք:

Բոլորովին նոր միջավայր մըն էր ինծի համար՝ տարբեր մթնոլորտ, տարբեր աշխարհ...

Եւ արդէն եկաւ նոր դպրոցիս առաջին օրը Եղիշէ Մանուկեան ազգային վարժարանին մէջ:

Հոն այլեւս Այնճարի ճանչցուած Մոսիկը չէի, այլ Այնճարէն եկած Նորէկ տղան:

Հոն էր, որ առաջին անգամ ծանօթացայ Հրակին: Միշտ կ'ըսէն, որ ամէնէն ամուր բարեկամութիւնները կը ծնին կոյիւէ կամ բախումէ մը ետք: Այդպէս ալ եղաւ մեր պարագան:

Սկիզբը երբեք գիրար չէինք հանդուրժեր, մինչև որ անհանդուրժողականութիւնը հասաւ իր գագաթնակէտին ու կռուեցանք: Ռ՛կ գիտէր, թէ հոն էր, որ ամէն բան պիտի փոխուէր:

Այս դէպքը կը պատահէր դպրոցէն արձակման ընթացքին, երբ մեր մայրերը եկած կ'ըլլային մեզ տուն տանելու, լայնկարծ մեզ իրարմէ բաժնելու ատեն գիրար տեսան:

Երկուքն ալ ամէցած՝ իրարու նայեցան: Անոնք Նոյն գիւղի զաւակներ եւ բարեկամներ էին:

Յաջորդ օրը, երկուքիս ականջը քաշուելէն ետք, արդէն իսկ դարձանք մտերիմ ընկերներ:

Երբ տակաւին նոր կը ծանօթանայի Պէյրուքի շքր-ջաններուն, առաջին անգամ ըլլալով մայրս զիս Պի-յաքուքի շրջանը՝ Հրակենց տունը հասցուց, ուր արդէն ան դուրսը զիս կը սպասէր: Սկսանք խաղալ, վազվզել եւ շէնքին պահակը ջղայնացնել ու ծիծաղիլ:

Երբ յանկարծ եկան սեւ ապակիներով չորս մեծ «Ճիփ»-եր, որոնցմէ մէկէն իջաւ հսկայ, հասակաւոր, փառահեղ պէլներով, քարիզմաթիք զինուորական մը:

Անոր ուսերուն վրայ աստղերը եւ սուրերը կը փայլփլէին, ու Հրակը բացագանչեց. «Ահա հայրս եկաւ»:

Ես տեղս սառած՝ զարմացած, հմայքով եւ յափըշտակութեամբ զինք կը դիտէի:

Ան գորավար Փանոս Մանճեանն էր...

Այդ պատկերը մինչև օրս շատ յստակ դրոշմուած կը մնայ մտքիս ու հոգիիս մէջ:

Այդ վայրկեանին ես ինծի հարց տուի. «Արդեօք ես ալ օր մը կրնամ՝ այսպէս ըլլալ»:

Ժամանակ անցաւ եւ շատ լաւ նիշերով ւարստեցի ուսումս ու ընտրեցի զինուորական ասպարեզը:

Երբ մտայ սպայից վարժարան եւ երեք տարիներ վերջ դարձայ սպայ, հոն է, որ աւելի լաւ ճանչայ, թէ Ռ՛կ է գորավար Մանճեանը:

Մարդ մը, որ չէր սիրէր ինքնիր մասին խօսիլ:

Մարդ մը, որ անուն եւ պատմութիւն ուներ բանակին մէջ:

Մարդ մը, որ կերտած էր սպաներու սերունդներ:

Օրինակելի զինուորական մը, որ մարմնացումն էր կարգապահութեան, օրէնքի, ճշգրտութեան, զոհողութեան եւ քաջութեան:

Հոս կ'ուզեմ պզտիկ դէպք մը բաժնեկցիլ ձեզի հետ:

Երբ տարիներ Պաալպեքի մէջ կը ծառայէի, ուր արդէն աւագ տեղակալ էի, մեր ջոկատի ընդհանուր պատասխանատու հրամանատարը՝ գորավար Ճ. Ա. ճաշի մը ընթացքին բոլոր սպաներուն առջեւ հետեւեալը պատմեց. «Տասնհինգ տարիներ առաջ, երբ ես դեռ աւագ տեղակալ էի, մեր գունդի ընդհանուր պատասխանատուն գորավար Փանոս Մանճեանն էր»:

Ու աչքերուս նայելով եւ խօսքը ինծի ուղղելով՝ ըսաւ. «Մովսէ՛ս, իր օրինակին հետեւե՛՛...»:

Այս քանի մը բառերը արդէն շատ բան կ'ըսէն: Այս խօսքը լսելէ ետք աչքերս փայլեցան, հոգիս լեցուեցաւ հրճուանքի եւ հպարտութեան զգացումներով:

Ինչպե՛ս կարելի էր նկարագրել այդ զգացումը, երբ Պաալպեքի խորերը այսպիսի համբաւ ունեցող բարձրաստիճան գորավար մը այսպիսի վկայութիւն մը կու տար բոլորին դիմաց...

Ի՛նչ հպարտութիւն հայրութեան...

Ի՛նչ հպարտութիւն Այնճարին...

Ահա այսպիսի տպաւորութիւններ ձգած էր գորավար Մանճեան սերունդներու վրայ:

Սիրելի՛ ժեներալ, քու տեղը շատ մեծ է բանակին եւ Լիբանանի պատմութեան մէջ, եւ կ'ուզեմ քեզի վստահեցնել, որ պիտի շարունակենք քու ուղիդ...

«Սիւստաթ ալ ամիտ, ալա խութաք նամշի» *:

ԶԱՓԻԹԵՆ ՄՈՎՍԵՍ ՆԱՇԱԼԵԱՆ

* Մեծարգոյ գորավար, քու քայլերովդ կ'ընթա-նակը:

ՀԱՄԱԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԻՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ



Գահիրէի մէջ 2000 թը-ւականին արաբական 5 երկիրներու առաջին տի-կիներ յղացան գաղա-փարը՝ կազմելու մարմին մը, որ պիտի զբաղի կնո-ջական հարցերու վերա-բերեալ հետազօտութիւն-ներ կատարելով եւ կնոջ ուժականութեան նեցուկ կանգնելով: Այս գաղա-փարը ինքնին նշուած է Արաբական լիկայի հրա-պարակած Գահիրէի յայ-տարարութեան մէջ, ուր բառացիօրէն նշուած է, որ՝

«Արաբական երկիրներու մէջ կինները պէտք է համախմբուին, եւ անոնց իրաւունքները պէտք է տրուին, որպէս-գի անոնք ժամանակի ընթացքին հզօ-րանան»:

Այս հինգ առաջին տիկիներն էին՝

Եգիպտոսի Առաջին տիկին Սիւզան Մուպարաք, Սուրիոյ Առաջին տիկին Ամմա Ասատ, Լիբանանի Առաջին տի-կին Անտըր Լահուտ, Յորդանանի թա-գուհի Ռանիա եւ Պահրէյի շէյխին կի-նը՝ շէյխ Սապիքա:

Համաձայնագիրը ի գօրու դարձաւ 2003 մարտին, եւ սկիզբը արաբական 7 երկիրներ իրենց մասնակցութիւնը բերին, իսկ Ներկայիս 15 արաբական երկիրներ մաս կը կազմեն՝ իւրաքան-

տիկին Սիւզան Մուպարաքին կողմէ, որ այդ բնակարանը վարձած էր Գա-հիրէի հայոց թեմի առաջնորդարանէն՝ նկատի ունենալով, որ անկէա պատ-կանած է հայ ընտանիքի մը, որ Զանա-տա գաղթելէ առաջ կառոյցը նուիրած է Ազգային առաջնորդարանին՝ իբրեւ թեմի կալուած օգտուելու անոր հասոյ-թէն:

Ներկայիս այս կազմակերպութեան գլխաւոր մտահոգութիւններէն մէկն է արաբ կնոջ ապահովութիւնը, նաեւ՝ հայ կնոջ ապահովութիւնը արաբա-կան երկիրներուն մէջ: Պատերազմի այս դաժան օրերուն, որ կ'ապրի ժողո-վուրդը Պաղեստինի, Կազայի, Լիբա-նանի հարաւի, Սուրիոյ եւ այլ շրջա-ններու մէջ, կնոջ ապա-հովութիւնը կը նկատուի մարդկային ապահովու-թենէ բխած ազգային ապահովութեան մէկ մա-սը: Թեւեւ անցեալին կնոջ ապահովութեան իմաստը կապուած է արևմտեան կարգապահութեան, սա-կայն Ներկայիս պատե-րազմներէ բխած անապա-հովութեան զուգահեռ, դարձեալ կ'աճին՝ հիւան-դութիւնները, երիտա-սարդներու կողմէ թմրե-ցուցիչի գործածութիւնը, կնոջ նկատմամբ բռնու-թիւնը եւ բռնաբարութիւ-նը: Այս բոլորը եթէ չու-սումսասիրուին, մարդկա-յին եւ յատկապէս կնոջ ինքնութիւնը կը տկարա-նայ, եւ անձնական նա-խընտրութիւնները կը փո-խուին:

Այս մտահոգութիւննե-րէն բխած ալ կազմակեր-պութիւնը համագումար-ներ կը կատարէ՝ օրուան ճգնաժամային մտահոգութիւններուն եւ մարտահրաւերներուն համաձայն: Այս խորհրդածողովները կը կատա-րուին հերթաբար արաբական բոլոր երկիրներուն մէջ, միշտ՝ Արաբական լիկային հովանաւորութեամբ:

Կազմակերպութիւնը նաեւ կը հրա-տարակէ գիրքեր՝ կիներուն գիտելիք-ներ փոխանցելու նպատակով: Վերջին հրատարակութիւններէն է ուղեցոյց մը, որ կը կրէ «Convention on the elimi-nation of all forms of discrimination against women» խորագիրը, եւ որուն պատրաստութեան մէջ ես ալ ներ-դրում ունեցայ՝ իբրեւ լիբանանցի մասնագէտ:

Պէտք է ըսել, որ այս ուղեցոյցը մեծ յաջողութիւն մըն էր կազմակերպու-թեան համար՝ տրուած ըլլալով, որ բո-լոր երկիրները իրենց քառամեայ տե-ղեկագիրը կը Ներկայացնեն ՄԱԿ-ի այս յանձնախումբին՝ CEDAW JURY: Յիշենք, որ ՄԱԿ-ը որդեգրած է այս համաձայնագիրը, որ կը բաղկանայ 30 յօդուածներէ, ուր մանրամասնօրէն կը բացատրուի կնոջ իրաւունքներուն եւ խտրականութեան չեզոքացման մա-պին: Անոնց որդեգրումով կարելի է կի-ներուն եւ այրերուն միջեւ հաւասարու-թիւն հաստատել մինչև 2030 թուա-կան:

Արաբ կիներու համաշխարհային կազմակերպութիւնը կը գործէ ամէն տեղ եւ կապեր հաստատած է աշխար-իի կառավարական եւ ոչ կառավարա-կան կազմակերպութիւններու հետ, իր աշխատանքով ու ջանքով կը միտի պաշտպանել կիներուն իրաւունքները՝ իրականացնելով ծրագիրներ, ի յայտ բերելով կիներուն արժանիքները, ամ-րապնդելով անոնց իրաւունքները եւ անոնց նկատմամբ ամէն տեսակի խնդ-րականութիւն չեզոքացնելով: Ե՜նչ-տենք նաեւ, որ ան կը ջանայ կնոջ ներ-կայութիւնը եւ թիւը աւելցնել բոլոր եր-կիրներու քաղաքական մարմիններուն մէջ, ուր կինը կրնայ իր յաջող ներդրու-մը ունենալ, ինչպէս՝ խորհրդարաննե-րուն եւ պետական տարբեր կառոյցնե-րու մէջ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԻԻ ՈՐՈՇՈՒՄ



Օրեր առաջ Հալէպի Շէյխ Մաքսուտ եւ Աշրա-ֆիէ շրջաններուն մէջ ծայր առած բախումները բնակչութեան վերոյիշեցուցին պատերազմի տա-րիներու սարսափը եւ վախի մթնոլորտը, երբ բնա-կելի թաղամասերու մէջ կ'ընթանային մարտեր եւ հրթիռներ կը տեղային ամէն կողմէ՝ քաղաքին մէջ կեանքը դժոխային դարձնելով: Ժողովուրդը, որ երկար տարիներ տառապեցաւ եւ տարատեսակ զրկանքներ կրեց, օրեր առաջ կրկին դժմ յանդի-ման եկաւ ապահովական սպառնալիքներու:

Այս իրադարձութիւնները տեղի ունեցան այն-պիսի ժամանակի մը մէջ, երբ Սուրիոյ մէջ խաղա-դութեան հաստատման եւ վերակառուցման ծրա-գիրներ կը քննարկուին ու արտաքին աշխարհիի հետ Սուրիոյ յարաբերութիւնները աստիճանա-բար կը բարելաւուին:

Բախումները ընթացք առին քրտական ներքին ապահովութեան ուժերուն եւ սուրիական բանա-կին միջեւ: Լրատուամիջոցներ յայտնեցին, որ Նախքան բախումները՝ արդէն հանդիպում մը Նա-խատեսուած էր կողմերուն եւ Սուրիոյ մէջ Միաց-եալ Նահանգներու դեսպանորդ Թոմաս Պարաքի մի-ջեւ, հետեւաբար եղածը Նախքան հանդիպումը զարկերակներու շօշափում էր, որ ցաւօք զոհեր ու վիրաւորներ խլեց կրկին:

Բարեբախտաբար զինադադարը արագ հաս-տատուեցաւ երկու կողմերուն միջեւ՝ կանխելով մարդկային կորուստներու աճը եւ ապահովելով բնակչութեան անվտանգութիւնը: Այս քայլը կա-րելորդ ազդանշան էր, որ կողմերը պատրաստ են վերադառնալու բանակցութեան սեղան: Սակայն ցարդ զգուշաւոր հանդարտութիւն կը տիրէ:

Ամերիկեան կողմին միջնորդութիւնը դրական ազդակ կրնայ դառնալ, սակայն հարցին լուծումը սուրիացիներուն վերապահուած է վերջապէս՝ ան-կեղծ եւ շարունակական բանակցութիւններով, թե-կուզ՝ քայլ առ քայլ տազնապի լուծման ուղղ-ւելով:

10 մարտի համաձայնութիւնը ԶԱՍԱՏ-ի եւ Սու-րիոյ Նախագահին միջեւ կը Նախատեսէ մինչև Նոր տարի իրականացնել ճշդուած կէտերը: Այս գործընթացը, սակայն, քաղաքական կամք կը պահանջէ. Էական փորձութիւն մը, զոր երկու կող-մերն ալ պէտք է յաղթահարեն:

Հալէպի վերջին բախումները կը յիշեցնեն, որ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանին մէջ խաղա-դութեան ուղին դիւրին չէ, սակայն զինադադարի հաստատումը եւ միջազգային միջնորդութիւնը բանակցութիւններու եւ աստիճանական լուծում-ներու դռները կրկին կը բանան: Եթէ կողմերը փո-խադարձ վստահութիւն ամրագրող քայլերու դի-մեն, համաձայնագրի կէտերը իրականացնելու տրամաբանութեամբ, կարելի կը դառնայ բա-խումները կանխել ու ներսուրիական ուժերով լու-ծումներու հասնիլ՝ արտաքին միջամտութիւնները սուղագոյնի իջեցնելով:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ՓՆՏՈՒՅԻ ԲԵԶ

Փնտռեցի քեզ ես առանձին՝
Մութ գիշերուան լուսնի լոյսին,
Աստղերուն հետ վառ, շողոշողուն,
Երգերուս հետ, երգվերուս,
Ամպերուն մէջ քեզ փնտռեցի,
Շանթերուն հետ իմ երկնքիս,
Չայրոյթին հետ իմ հողմերուս,
Անձրեւներուն հետ աչքերուս,
Տրոփումիս հետ իմ սրտիս,
Յօրինումին հետ իմ երգիս,
Առաւօտուն երբ սուզուեցայ՝
Խորը ծովուն, ժայռերուն տակ,
Ես քեզ այսօր յոյժ յոգնաջան
Շատ փնտռեցի, բայց չգտայ:

ՍԻՄՈՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ

www.lokh-arcl.org

ՍՈՍԻ ՓՈԼՍԵԱՆ

ԱՅԺՄԵԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԵՆ
ԲԱՐՁՐ ԿԱՄՈՒՋԸ



Աշխարհի ամենն բարձր նոր կամուրջին բացումը կատարուեցաւ 28 սեպտեմբերին: Անիկա կը գտնուի Չինաստանի հարաւ-արեւմուտքը, Կիզուի լեռներով ծածկուած շրջանին մէջ: Անոր շինութիւնը մեծ իրագործում մը կը համարուի:

- 625 մէթր բարձրութիւն
Պեյփանճիանկի կամուրջը կը գտնուի 625 մէթր բարձրութեան վրայ: Անիկա կախուած կամուրջ մըն է. այսինքն կանգնած կը մնայ շնորհիւ շատ տոկուն մետաղեայ լարերուն, որոնք իրենց կարգին կախուած են շատ հաստատուն երկու աշտարակներէ: Այս կամուրջին բացումէն առաջ աշխարհի ամենն բարձր կա-



մուրջը կը գտնուէր Նաեւ Նոյն շրջանին մէջ, սակայն ան «միայն» 565 մէթր բարձրութիւն ունէր:

- 2 վայրկեանուան ճամբայ
Կիրճին մէկ կողմէն միւսը անցնիլը այսուիւտե միայն 2 վայրկեան կը տեւէ: Կամուրջին շինութենէն առաջ շրջանի բնակիչները աւելի քան մէկ ժամ կը դնէին Նոյն ճամբան կտրելու համար: Դետեւաբար այս կամուրջը անոնց կարելիութիւնը պիտի տայ իրենցմէ աւելի հեռու շրջաններ աշխատանքի երթալու:

- 207 մէթր ճամբայ մը՝ տեսարաններով շրջապատուած վերելակի մէջ
Կամուրջին հետաքրքրական առաւելութիւններէն մէկն է Նաեւ զբօսաշրջիկներուն անոր առաջարկած պտոյտները: Օրինակի համար, կարելի է գործածել կամուրջին ապակիներով շրջապատուած վերելակը, կամ՝ ապակիներով անցքը, ուրկէ կարելի է քալել՝ օդին մէջ կախուած ըլլալու տպաւորութիւնը ունենալով եւ հիանալով չորս կողմը տարածուած տեսարաններով:

- Երեքուկէս տարուան աշխատանք
Կամուրջին շինութիւնը տեւած է երեքուկէս տարի, եւ անոր ծախսը հասած է աւելի քան 370 միլիոն տոլարի:


- Մայրուղի մը, որ լեռը երկուքի կը բաժնէ
Այս կամուրջը շինելու համար մեծ մայրուղի մը շինուած է: Սակայն փոխանակ լեռներուն ետեւէն դառնալով՝ չինները որոշած են պարզապէս... լեռը երկուքի բաժնել: Ճիշդ է, որ նկարները եւ տեսքը տպաւորիչ կրնան ըլլալ, սակայն Նոյն ատեն անոնք մեզի մտածել կու տան նման շինութիւններուն ազդեցութիւնը բնութեան եւ հոն ապրող անասուններուն ու բուսականութեան վրայ:

ՀՈՅԱՄՈՂԵՍԻ ԱԿՈԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ՝
ԿՈԿՈՐԴԻԼՈՍԻ ՄԸ ՈՍԿՈՐԸ

Արժանթինի մէջ զգտնուած է փոքրիկ հոյամողեսի մը ամբողջական կմախքը: Այդ կմախքը մեծ գարմանք յառաջացուց գիտնականներուն մօտ, երբ անոնք հոյամողեսին ակռաներուն մէջ գտան կոկորդիլոսի մը ոսկորը:

Այս հոյամողեսի տեսակը տակաւին մինչեւ հիմա անծանօթ էր. անոր տրուեցաւ

Ժոաքինրափթոր Զասալի անունը: Այս հոյամողեսը մաս կը կազմէր մեկարափթորներու ընտանիքին: Այս ընտանիքին հոյամողեսները ճանչցուած են իրենց երկար գլուխով եւ մեծ հզօր ճանկերով: Անոնք կ'ապրէին 66-70 միլիոն տարիներ առաջ:



մասի մը, որ կ'ընդգրկէր Նաեւ Ափրիկէն եւ Աւստրալիան: Կլիման տաք էր ու խոնաւ:

անոնք «կը պահպանէին» սատկած անասուններու ոսկորները: Բրածոները շատ դիւրութեամբ կը կազմուէին: Դետագային, որովհետեւ շրջանը դարձած է չոր եւ շատ քիչ բնակուած, այս բրածոները չեն փճացած: Եւ ժամանակի ընթացքին գետնիը մաշումին պատճառով, անոնք կամաց կամաց կը վերայայտնուէին:



Այս հոյամողեսին մնացորդները գտնուեցան Արժանթինի հարաւը՝ Փանթակոնիի շրջանին մէջ:

Շատ հին ժամանակներուն, այդ շրջանի բնութիւնը տարբեր էր: Հոյամողեսներու կէսնքին վերջին շրջաններուն՝ 65-145 միլիոն տարիներ առաջ, Փանթակոնիին մաս կը կազմէր Կոնտուանա կոչուած սուփոր ցամաքա-

Անոր ճահիճները, անտառները եւ դաշտերը դրախտ մըն էին հոյամողեսներուն եւ ուրիշ անասուններուն համար:

Հոյամողեսներու ժամանակաշրջանին Փանթակոնիի մէջ հրաբուխները յաճախ կը ժայթքէին: Անոնց մոխիրները, որոնք երբեմն ցեխի կը վերածուէին, գետին մը կը ծածկէին: Այս ձեւով



Մեզի ծանօթ ամենէն մեծ հոյամողեսներու կարգ մը տեսակներ գտնուած են Փանթակոնիի շրջանին մէջ: Անոնցմէ յիշենք թիթանոսարները, ինչպէս՝ Փաթակոթիթան Մայորումը, որուն 37 մէթր երկարութիւնը մրցանիշ մըն է, կամ՝ Արժանթիսորումը, որ աւելի քան 30 մէթր է: Կան Նաեւ մսակերները, ինչպէս՝ Ժիկանթոսորումը, որ Թիրանոսորուս Ուեքսի՝ Թի Ռեքսին չափ մեծ է:



ՊԶՏԻԿ ՄԱՆԶՈՒԿ ՄԸ
ԱՆԳԻՏԱԿՑԱԲԱՐ
Կ՝ՕԳՆԵ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Այս ամառ Անգլիա բնակող 7 տարեկան Արթիւր պտոյտ մը կը կատարէր երկրին հարաւը գտնուող Լիզզըտ հրուանդակին շրջանին մէջ: Ան բարձր ժայռի մը վրայ կը գտնէ ակռայ մը:

Գիտնականները կը հաստատեն, որ այդ


ակռան մարդկային է: Եւ անոնք կը սկսին փնտռութիւններ եւ պեղումներ կատարել այդ շրջանին մէջ: Կամաց կամաց անոնք կը զգտնեն ուրիշ մարդկային մնացորդներ, անոնցմէ ամենէն հինները հասած են Նախապատմական շրջաններ:




Կարելի է Նաեւ, որ այդ շրջանին մէջ թաղուած են Նաեւ վերջին քանի մը դարերուն ընթացքին ընկղմած Նաւերու անձնակազմի անդամներ:




ԺԱՄԱՆՑ




Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 10 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր պզտիկ ձեւի տեղը հոյամողեսի պատկերին մէջ:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած առարկաները:

ՊԱՏԵԹՊՈԼ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր ժամը 21:45-ին Անթուկի դպրոցի դաշտին վրայ կը սկսի Լիբանանի պասքեթպոլի ախոյեանութեան 2025-2026 տարեշրջանը, ուր Անթուկի կը հիւրընկալէ Շանվիլը:

Վաղը յետմիջօրեի Շիյահի մարզադաշտին վրայ Պեյրուֆ Ֆըրսթ կը հիւրընկալէ «Էս. Էս. Էյ.»-ը, եւ անւի ուշ ժամը 21:00-ին Մարքազիէ Ծիւնիի դաշտին վրայ, Մարքազիէ (Սանթրալ) կը հիւրընկալէ Անդրանիկը:

Երկուշաբթի օր, Լիբանանի ախոյեան Ռիատի, եւ իր դաշտին վրայ, Մանարայի մէջ պիտի հիւրընկալէ Թատամոն Զարաժէլը ժամը 16:45-ին, իսկ ԶՄԸՄ-ի տղոց տարեշրջանը կը սկսի երեկոյեան ժամը 20:30-ին, երբ Մըզհէրի «Աղբալեան-ԶՄԸՄ մարզամշակութային կեդրոնի» «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» դաշտին վրայ, կը հիւրընկալէ Զուփ-սը:

Անցեալ տարեշրջանին, ԶՄԸՄ-ի տղաքը երթին ծանր պարտութիւն մը կրելէ ետք կըրցած էին Նոյն ձեւի պարտութեան մատնել Զուփսը՝ Մըզհէրի մէջ (126-105):

Ծիշդ Է, որ խումբին անդամները լաւ ձեւով «չվարժուեցան իրար, բայց վստահաբար համակիրներու «տաք» մթնոլորտէն ոգեւորուած, մեր տղաքը իրենց վրայ դուրս յոյսերը պիտի իրակաւացնեն:

Ստորեւ՝ առաջին հանգրուանի յայտագիրը.-

ԱՅՍՕՐ
Անթուկի - Շանվիլ (Անթուկիի դպրոցի դաշտ, ժամը 21:45)
ՎԱՐԸ
Պեյրուֆ Ֆըրսթ - «Էս. Էս. Էյ.» (Շիյահի դաշտ, ժամը 16:45)

ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

- ԱՅՍՕՐ՝ ՊԱՅԵՐՆ ՄԻՆԻՆ - ՏՈՐԹՄՈՒՆՏ
ՌՈՍԱ - ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ
- ՎԱՐԸ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ - ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸՏ

Այս շաբաթավերջին կը շարունակուին Եւրոպայի ֆութպոլի լաւագոյն 5 ախոյեանութիւններու մրցումները, ազգային խումբերու դարձրէն ետք:

Հետաքրքրական մրցումներ կան շաբաթավերջին, ուր «Բլասիք» մրցումներ տեղի պիտի ունենան Անգլիոյ, Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ:

«Փրեմիեր լիկ»-ի պատմութեան ամենէն «տաք» մրցակիցներ Լիվըրպոլ եւ Մանչեսթըր Եունայթըդ իրար դէմ պիտի մրցին, հակառակ անոր որ վերջին տարիներուն Լիվըրպոլ անւի լաւ մակարդակ ունի, քան Մանչեսթըր Եունայթըդ:

Լիվըրպոլի համար թերեւս ազգային խումբերու դադարը ճիշդ պահուն տեղի ունեցաւ, մանաւանդ որ խումբը պարտուած էր եւ վերջին երեք մրցումներուն (երկու մրցումներ «փրեմիեր լիկ»-ին, իսկ մրցում մըն ալ «Չեմփիընշ Լիկ»-ին), սակայն «կարմիրներ»-ը իրենց դաշտին վրայ անյաղթ կը մնան երկար ժամանակէ եւ միայն 2 անգամ պարտուած են վերջին 53 մրցումներուն:

Եունայթըդ շատ լաւ ձեւով չէր սկսած տարեշրջանը, բայց վերջերս համեմատաբար անւի լաւ ֆութպոլ կը խաղար եւ կրնար դժուար մրցակից ըլլալ Լիվըրպոլի դէմ: Լիվըրպոլ «կարմիր սատանաներ»-ուն դէմ եւ վերջին 14 ճակատումներուն միայն 1 մրցումի պարտութիւն կրած է, երբեք չպարտուելով իր դաշտին վրայ:

«Փրեմիեր լիկ»-ի պատմութեան ընթացքին Մոհամետ Սալահի նման ոչ մէկ մարզիկ 13 կոլ եւ 19 Էսիսթ կատարած է Եունայթըդի դէմ, ուր իր 13 կոլերէն 10-ն ան նշանակած է Բ. կիսախաղին:

Լիվըրպոլէն պիտի բացակայի արագիւղի բեր-



Սանթրալ - Անդրանիկ (Սանթրալի դաշտ ժամը 21:00)

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
Ռիատի - Թատամոն Զարաժէլ (Մանարայի դաշտ, ժամը 16:45)
ԶՄԸՄ - Զուփս (Մըզհէրի մէջ, ժամը 20:30)

ԵՐԵՃԱԲԹԻ
Սաժես - Շապապ Պաթրուն (Ղազիրի մէջ, ժամը 16:45):



ցումներուն 3-է անւի կոլ կը նշանակէ:

Տորթմուտ, որ Բ. դիրքը կը գրաւէ, յոյսով է, որ անակնկալ արդիւնքով վերադառնայ տուն՝ տարբերութիւնը 1 կէտի նուագեցնելով: Նիքո Զոլուշ շատ լաւ գիտէ Պայերն Միւնիխն ու անոր խաղաոճը, եւ Տորթմուտի հետ ան կրնայ լաւ ձեւով պաշտպանուիլ:

137 «Բլասիք»-ներուն թիւը մրցակիշ է Գերմանիոյ պատմութեան ընթացքին, եւ Պայերն միայն մէկ պարտութիւն կրած է վերջին 14 ճակատումներուն, հակառակ անոր որ վերջին 3 ճակատումներուն Պայերն չէ կրցած յաղթել Տորթմուտին:

Պայերն Միւնիխ այս տարեշրջանին միշտ նշանակած է առաջին կոլը եւ յաղթական մտած է հանդերձարան: Մրցակից Տորթմուտ իր կարգին «Պուտլըսիլկայի» իր վերջին 11 մրցումներուն 10-ին՝ յաղթական մտած է հանդերձարան, եւ Պայերնի դէմ վերջին երկու ճակատումներուն յաղթած է «Ալիանց Արենա»-ի մէջ:

Իտալիոյ մէջ, Ա. Էս. Ռոմա պիտի հիւրընկալէ Ինթեր Միլանը՝ «Սերի Ա.»-ի սպասուած շաբթուան մրցումին:

2-1 արդիւնքով յաղթելէ ետք Ֆիորենթինայի դաշտին վրայ, Ռոմա իր լաւ տարեշրջանը (5 յաղթանակ եւ 1 պարտութիւն) կ'ուզէ շարունակել Ճիան Փիեթո Կասփերիի հետ եւ միայն կոլ-Էվըրէճով ետ կը մնայ առաջին դիրքը գրաւող Նափոլիէն:

«Սթաւիօ Օլեմփիք»-ն անգամ մը ես դարձած է Զոմմի ակումբի ամրոցը, ուր Ռոմա իր վերջին 15 մրցումներուն 12 յաղթանակ եւ միայն 1 պարտութիւն կրած է:

«Ներացուրի»-ները իրենց կարգին լաւ վիճակի մէջ կը գտնուին եւ վերջին մրցումին Պոնի փայլած էր կոլ մը եւ 3 Էսիսթ ձեռք ձգելով, ուր Ինթեր 4-1 արդիւնքով յաղթած էր Զրեմոնիզէին: Պէտք է ըսել, որ Ինթեր իր դաշտէն դուրս 4 մրցումներն ալ յաղթած էր 2-0 արդիւնքով, եւ մեծ հարց մը չէ դաշտէն դուրս խաղալը:

Այս մրցումը «Սերի Ա.»-ի պատմութեան ամենէն շատ կոլերու նշանակումով յատկանշուած ճակատումն է (532 կոլ): Վերջին 9 ճակատումներուն Ինթեր 7 անգամ յաղթած է:

ՔԱՐԱԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ
ՄԵԿՆԵՑԱՒ ՓԱՐԻՉ



2025 թուականի Եւրոպայի քարաթի ախոյեանութիւնը տեղի ունեցաւ Երեւանի մէջ 7-էն 11 մայիսին, ուր երկու հայ մարզիկներ վաստկեցան կարելուր կէտեր՝ մասնակցելու աշխարհի ախոյեանութեան:

Հայաստանի ազգային քարաթի հաւաքականը, ֆետերասիոնի Նախագահ Վազգէն Յարութիւնեանի ղեկավարութեամբ, մեկնեցաւ Փարիզ՝ մասնակցելու 2025-ի աշխարհի ախոյեանութեան գտումի մրցումներուն: Հաւաքականի երկու մարզիկներ՝ Գոռ Ներսիսեան եւ Եուրա Զաւեան, արդէն իսկ ապահոված են իրենց մասնակցութիւնը աշխարհի

ախոյեանութեան, որ տեղի պիտի ունենայ 27-էն 30 յուլիսէր՝ Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէ մէջ:

Եուրա Զաւեան կը մասնակցի մինչեւ 60 քկ կշիռի մրցումներուն, իսկ Գոռ Ներսիսեան՝ մինչեւ 84 քկ. կշիռի մրցումներուն:

Հաւաքականի միւս անդամներ՝ Լենա Կիւլիմեան, Անիթա Մակեան, Սուրեն Յարութիւնեան եւ Միխայիլ Միխարթեան կը պայքարին աշխարհի ախոյեանութեան մասնակցելու իրաւունքին համար՝ գտումի մրցումներուն, որոնք ինչպէս նշեցինք, տեղի պիտի ունենան Փարիզի մէջ, այս շաբաթավերջին:

«ԷՍ.ԷՍ.ԷՅ.»

ՌԱՖԱՅԷԼ ԿՈՍՏԱՆԵԱՆ՝
ՊՐՈՆՉԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ



Հայ մարզիկ Ռաֆայէլ Կոստանեան արնագէ մետալ շահեցաւ 2025-ի կրեփիլիկի աշխարհի ախոյեանութեան, որ տեղի կ'ունենայ Սերպիոյ Նովի Սատ քաղաքին մէջ:

«Էմ. Էմ. Էյ.»-ին մաս կազմող «Կրեփիլիկ» մարզաձեւի 62 քկ կշիռի պրոնզի մետալի մրցումին, Կոստան-

եան պարտութեան մատնեց Ղազախստանի ներկայացուցիչ Ատլան Ասուլեւը:

Հայաստանի միւս ներկայացուցիչներ Մայիս Ներսիսեան (66 քկ) եւ Սուրեն Խուրդեան (84 քկ) պիտի մասնակցին «Ծի. Այ.» կարգի մըրցումներուն:

ՄԱՐՄԱՍԱՐՉՈՒԹԻՒՆ

ՎԱՐԸ ԿԸ ՍԿՍԻ ԱՇԽԱՐՀԻ
ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Վաղը ճաքարթայի մէջ (Ինտոնեզիա) կը սկըսի մարմնամարզութեան 2025-ի աշխարհի ախոյեանութիւնը: Հայաստան իր մասնակցութիւնը պիտի բերէ այս մրցաշարքին, մասնակցողներուն կարգին պիտի ըլլան Եւրոպայի գործող երկու ախոյեաններ Զամլեթ Մանուկեան եւ Արթուր Դաւթեան:

Հայաստանը պիտի ներկայացնեն Արթուր Դաւթեան, Վաղինակ Դաւթեան, Մամիկոն Խաչատրեան, Արթուր Աւետիսեան եւ Զամլեթ Մանուկեան:

Հայ մարմնամարզիկները կը մըրցին անհատական կարգերուն մէջ: Նշենք, որ Արթուր Դաւթեանի համար այս ախոյեանութիւնը, կարելիութիւն մըն է հաստատելու իր դիրքը՝ իբրեւ աշխարհի լաւագոյն մարմնամարզիկներէն մէկը թափկի ցատկին մէջ, իսկ Զամլեթ Մանուկեան հանդէս պիտի գայ Նոյնի վարժութեան մրցումներուն, մարզածէ մը, որուն մէջ այս տարի ան նուաճեց Եւրոպայի ախոյեանի տիտղոսը:

19-էն 21 հոկտեմբերին տեղի կ'ունենան գտումի հանգրուանները, ապա 22 հոկտեմբերին՝ տղոց հա-

մակցուած բազմամարտի աւարտականը:

23 հոկտեմբերին տեղի կ'ունենայ աղջկանց համակցուած բազմամարտի աւարտականը: 24 հոկտեմբերին տեղի կ'ունենան անհատական աւարտական մրցումներ, օղակներու, Նոյնի եւ ազատ վարժութիւններու (տղոց), ցատկելու եւ անհասար ձողերու մրցումները (աղջկանց):

25 հոկտեմբերին տեղի կ'ունենան անհատական աւարտականները ցատկելու, բարձր ձողի եւ զոյգ ձողերու (տղոց), ինչպէս նաեւ ազատ վարժութիւններու եւ ճառագայթի (աղջկանց) մրցումները: Հայաստանի հաւաքականը արդէն իսկ քանի մը օրէ ի վեր հասած է ճաքարթա եւ աւարտած իր պատրաստութիւնները մրցումներէն առաջ:



դապահ Ալիսոն, մինչ կեդրոնի պաշտպան Իպրահիմա Բոնաթէ վիճակը յստակ չէ, եթէ կրնայ խաղալ, թէ ոչ, մանաւանդ որ ան Ֆրանսայի ազգային խումբին հետ չէր մասնակցած վիրաւոր ըլլալուն պատճառով: Նուսէյր Մագրաուի կրնայ վերադառնալ Եունայթըդի հետ:

Գերմանիոյ «Բլասիք»-ն պիտի հիւրընկալէ ախոյեան Պայերն Միւնիխ՝ ընդունելով Տորթմուտը «Ալիանց Արենա» դաշտին մէջ:

Պայերն Միւնիխի տարեշրջանը շատ յաջող է՝ իր բոլոր 10 ելութներն ալ յաղթանակներով սկսելով: 1965-ին «Պուտլըսիլկա»-ի միւնալէն ետք, լաւագոյն ձեւով սկսած խումբն է Պայերն, որ պէլ-ճիքացի Վենսան Զոմփանիի հետ վերջին 7 մըր-

ԸՍՏ «ՈՒՈԼ ՍԹՐԻԹ ԾՐՈՆԸԼ»-Ի

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՁՆԵՐ ԲԱՐԱՅԻՊԵԱՆ ԾՈՎՈՒ ԾՐԶԱՆԻՆ ՄԵՋ ԱՐԴԻԱԿԱՆ ԶԵՆՔԵՐ ՏԵՂԱԿԱՅԱԾ Է



«Ուոլ Սթրիթ Ծըռնըլ» հաղորդեց, որ Միացեալ Նահանգներ Զարայիպեան ծովու շրջանին եւ Վե- նետուելայի հիւսիսային օդային տարածքին մէջ արդիական զէնքեր տեղակայած է:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութենէն՝ Փենթակոնէն ամերիկացի պաշտօնատար մը ամերիկեան օրաթերթին յայտ- նած է, թէ մասնայատուկ ուժեր յատուկ գործողու- թիւներու միաւորներէն ուժեր տեղակայուած են, ներառեալ օդուժի թիւ 160 գաղտնի միաւորէն գո- րամաս մը:

«Ուոլ Սթրիթ Ծըռնըլ» հաղորդեց, որ նշեալ միաւորը մասնայատուկ ուժերուն համար առաքե- լութիւններ կը կատարէ եւ ծանօթ է Պըն Լատնի սպանութեան գործողութեան իր մասնակցու- թեամբ:

Օրաթերթը աւելցուց, որ շրջանին մէջ տեղա- կայուած ուժերուն մէկ մեծ մասը կը կազմեն մար- դատար եւ յարձակողական մեծ ուղղաթիռները:

ՀՅԳ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐԺԻՆԻ ՆԱԽԱԿԸ...

Շարունակուած Ա. Էջէն

խաղաղութիւն»-ը, սակայն նշեալ համաձայնագիրը ո՛չ արդար է, ո՛չ ալ համապարփակ, որովհետեւ կ'ան- տեսէ իսկական խաղաղութեան հա- մար խիստ կարեւոր հարցեր՝ Արցա- խի հայ ժողովուրդի միջազգային օրէնքով ամրագրուած տունդարձի իրա- տունքը, Պաքոյի մէջ պահուող հայ պատանդներու ազատ արձա- կումը, Յայաստանի Հանրապետու- թենէն տարածքներ բռնագրաւած ազրպէյճանական ուժերու հեռացու- մը եւ Արցախի մէջ հայկական ազգա- յին ու քրիստոնէական ժառանգութե- ան դէմ գործուող մշակութային ցե- ղասպանութեան դադրեցումը:

ՀՀԴ Լիբանանի Հայ դատի մար- միւրը երեսփոխան Սայտին, անոր

կուսակցութեան եւ Նորվեկիոյ խորհրդարանին կոչ ուղղեց՝ գործ- նական աշխատանք տանելու՝ իսկա- կան խաղաղութեան եւ «արդար ու համապարփակ» համաձայնութեան մը համար կենսական եղող նշեալ մարդկային իրաւանց կարեւոր հար- ցերու լուծման համար:

Նամակին կողքին Նորվեկիացի երեսփոխանին յանձնուեցաւ Հա- մազգայինի Հայաստանի եւ Արցախի գրասենեակներու նախաձեռնու- թեամբ եւ Համազգայինի Կեդրոնա- կան վարչութեան աջակցութեամբ հրատարակուած «Արցախ. Վտան- գուած Ժառանգութիւն» եռալեզու պատկերագիրքի առաջին հատորէն օրինակ մը:

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՄԻ ԵՒ ՍԻՆ ԷԼ ՖԻԼԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն



բամին՝ Պուրծ Համուտին եւ Սին Էլ Ֆիլին ցուցաբեր- ւած մնայուն աջակցութեան համար:

Մերթի գայմաքամ Մարլէն Հատտատ արտասա- նեց Լեռնալիբանանի նահանգապետ Մոհամետ Մաքքաուիի խօսքը: Ան մեծ գնահատանք ուղղեց երկու քաղաքներու ընկերային, բարեսիրական եւ քաղաքացիական կազմակերպութիւններուն եւ Պուրծ Համուտի ու Սին Էլ Ֆիլի քաղաքապետու- թիւններուն, երկրին դիմագրաւած ներկայ ծանր պայմաններուն մէջ անոնց թափած ջանքերուն հա- մար: Ան կոչ ուղղեց բոլոր միութիւններուն եւ տեղա- կան ինքնակառավարման մարմիններուն ջանքերը մէկտեղելու՝ ընկերութեան ծառայելու եւ անոր կա- րողականութիւնը ամրապնդելու համար:

Խօսքեր արտասանեցին նաեւ Սին Էլ Ֆիլի փոխքաղաքա- պետ Նեսիի Ժըրիոս եւ Պուրծ Համուտի ու Սին Էլ Ֆիլի հաստա- տութիւններու համակարգող յանձնախումբի անունով Ժանին Նաուֆալ:

ԵՐՈՂԱՅԻ ԸՆԿԵՐԱՐԱՎԱԿԱՆՆԵՐՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶՐՊԵՅՃԱՆԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

հայկական մշակութային ժառանգութեան պաշտ- պանութիւնը: Ընդունուած բանաձեւով նաեւ կա- րեւոր կը նկատուի Հայաստանի ժողովրդավարա- կան զարգացումներու շարունակական դիտար- կումը՝ ներառեալ օրէնքի գերակայութիւնը, դա- տական անկախութիւնը եւ քաղաքական ազա- տութիւններու պաշտպանութիւնը:

Համագումարի որդեգրած բանաձեւերէն «հա- ղաղութեան, բարօրութեան եւ ներառականու- թեան խթանումը Եւրոպայի եւ անոր դրացի շըր- ջաններուն մէջ» բանաձեւին մէջ, Եւրոպայի ընկեր- վարականներու կուսակցութիւնը կը նշէ.

«Մենք կը վերահաստատենք մեր աջակցութիւ- նը բոլոր այն միջազգային ջանքերուն, որոնք ուղղ- ւած են խաղաղութեան, անվտանգութեան եւ կա- յունութեան ապահովման Հարաւային Կովկասի մէջ, մասնաւորապէս՝ Հայաստանի մէջ Եւրոպա- կան Միութեան քաղաքացիական առաքելութեան տեղակայման միջոցով:

Ազդպէճան պետք է ազատ արձակէ բոլոր հայ գերիները, ապահովէ Լեռնային Ղարաբաղի հայերու անվտանգ վե- րադարձը՝ միջազգա- յին վերահսկողութեան ներքեւ եւ պահպանէ շրջանի հայկական մշակութային ժառան- գութիւնը: Մենք կը վե- րահաստատենք մեր աջակցութիւնը Ազըր- պէյճանի ժողովրդա- վարական ընդդիմու- թեան: Մենք կ'ընդգը- ծենք Հայաստանի ներ- քին ժողովրդավարա- կան գործընթացներու շարունակական դի- տարկումի կարեւորու- թիւնը, ներառեալ՝ օրէնքի գերակայութիւ- նը, դատական անկա- խութիւնը եւ քաղաքա- կան ազատութիւննե- րու պաշտպանութիւ- նը»:

Համագումարը Եւ- րոպայի ընկերվարա- կաններու բարձրագոյն ժողովն է, ուր կը քըն- նարկուի համաերո- պական այս մեծ կու- սակցութեան նախըն- թաց գործունէութիւնը, կ'որոշուին ռազմավա- րական եւ ծրագրային քաղաքական առաջ- նահերթութիւնները, կ'ընտրուի կուսակցու- թեան նոր գործադիր մարմին:

Եւրոպայի ընկերվա- րականներու կուսակ- ցութեան իբրեւ լիիրաւ անդամ կ'անդամակ- ցին Եւրոպական 33 կուսակցութիւններ, իբ- րեւ ընկերակից՝ 13, իսկ դիտորդ անդամներու թիւը 15-ն է: Անդամակ- ցութեան կարգավիճա-

կը կախուած է Եւրոպական միութեան հետ պատ- կան երկրի յարաբերութիւններու բնոյթէն: ՀՀ Դաշնակցութիւնը Եւրոպայի ընկերվարականնե- րու կուսակցութեան անդամակցող միակ քաղա- քական ուժն է:

Այս կուսակցութեան հետ միջկուսակցական կապերու շարունակական զարգացումը ՀՀ Դաշ- նակցութեան արտաքին յարաբերութիւններու կա- րեւոր ուղղութիւններէն մէկն է:

ՀՀ Դաշնակցութեան պատուիրակութիւնը կը ներկայացնեն Գասպար Կարապետեանը, Սարինէ Աբրահամեանը, Գեորգ Դուկասեանը, Նարոտ Նո- րամանեանը: Կը նախատեսուի ՀՀԴ պատուիրա- կութեան աշխուժ մասնակցութիւնը համագումա- րի աշխատանքներուն, հանդիպումներ բազմաթիւ երկիրներու ընկերվարական, ընկերվար-ժողովըր- դավարական եւ աշխատաւորական կուսակցու- թիւններու ներկայացուցիչներու հետ, փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերու լայն շրջանակի քննարկում:

Զմամու Պատրիարքական Կղերի Միաբանութիւն

ԻՆՎԵՏԻՈՍ ՄԱՐԿՈՅԵԱՆԻ ՍՐԲԱԶԱՍԱՆ ԱՐԼՈՐՈՒԹԻՒՆ

Կիրակի 19 Յոկտեմբեր 2025 | Զմամու Մայրավանք

10:00 | Ս. եւ Աննահ Պատարագ

11:00 | Ուղիղ եթեր - Սրբադասման հռչակում Վատիկանի Ս. Պետրոս Զրապարակէն

12:00 | Տօնակատարութիւն, այցելութիւն Ս. Իգնատիոս Մալյոյեանի Նուիրուած թանգարան

Փոխադրամիջոցները ապահովուած են: Դիմել Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններուն:

ՇԵՐԱՌԱՎԵՐՋԻՆ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00- Զայլերգներ / Առաւօտ լուսոյ	2.00- Սիրային երգեր
7.05- Հանդարտ երգեր	3.00- Այլազան երգեր
8.30- Լուրեր	6.00- Հանդարտ երաժշտութիւն
9.00- «10+1» (Հիւր՝ Վարդան Պա- տալեան- կրկ.)	ԿԻՐԱԿԻ
9.20- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ	7.00- Զայլերգներ / Առաւօտ լուսոյ
10.00- Վերամշակուած՝ ռեմիքս երգեր	7.05- Հանդարտ երգեր
10.30- Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեստում)	9.30- Լուրեր
10.45- Եղանակներ	9.40- Չուգերգներ
11.00- «Հայեացքն Արցախին» (կրկ.)	10.00- Պատարագ
11.30- Հայրենի սիրուած երգեր	10.00- Պատարագ երգիչներու կատարումներ
12.00-«Բիչ մը ծիծաղ»	12.30- Լուրեր
12.10- «ԳՈՂՈՐ» համոյթի կատա- րումներ	12.40- Կանոնավառ երգեր
1.00- Ազգային-հայրենասիրական երգեր	1.00- Ազգային-հայրենասիրական երգեր
1.30- Լուրեր	2.00- «Յիշատակելիները» (Կարեն Պատալեան)
2.00- Յիշատակելիները (Արտաշէս Թեքէլեան)	2.05- Յեղափոխական երգեր
2.05- Յեղափոխական երգեր	4.00- Նոր երգեր
3.00- Կանոնավառ երգեր	5.00- «Վանայ Զայն»-ը երեկոյեան
4.00- «Կենաց ծառ» (կրկ.)	5.05- Սիրուած երգիչներու կենդանի կատարումներ
4.30- Ժողովրդային երգեր	6.00- Ռատիօ-թատրոն (կրկ.)
5.00- «Վանայ Զայն»-ը երեկոյեան	6.20- Եղանակներ
5.05- «Երգ-երգոց»-ի կատարումներ	6.30- Լուրեր
5.30- Հայրենի խումբերու կատարումներ	6.50- Լիբանանահայ երգիչներու կատարումներ
6.30- Լուրեր	7.30- Կանոնավառ երգեր
6.50- Սփիւռքահայ երգիչներու կա- տարումներ	8.00- Ազգագրական-տոհմիկ երգեր
7.30- «Զամի ֆրենտ»-ի կատա- րումներ	8.30.- Չուգերգներ
8.00- Կանոնավառ եւ նոր երգեր	9.30- Ազնաւորի երգեր
11.00- Յունական երեկոյ	10.00- Հայրենի սիրուած երգեր
12.00- Յիշատակելիները / Յեղա- փոխական երգեր	11.00- Աշուղական երգեր
	12.00- «Յիշատակելիները» / Յեղա- փոխական երգեր

Ձեր մնայուն ընկերակիցը

Radio Voice of Van